

Հաստատված է՝

«Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական  
լեզվահասարակագիտական համալսարան»

հիմնադրամի գիտական խորհրդի

30.11.2018 թ. № 2 նիստի որոշմամբ

ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի նախագահ՝

Կ.Վ.Հարությունյան



## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

### ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի (այսուհետ՝ ԵՊԼՀ) առաջին օգնության կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) կառուցվածքային ստորաբաժանում է և ղեկավարվում է համալսարանի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

#### II. ԿԵՆՏՐՈՆԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2. Կենտրոնի նպատակն է ուսանողներին և համալսարանի անձնակազմին առաջին բուժօգնության իրականացումը:
3. Կենտրոնի խնդիրները և գործառույթներն են՝
  - 1) վարակիչ հիվանդությունների (թոքախտ, թոքաբորբ, ջրծաղիկ, կարմրուկ, դեղնախտ) կասկածի դեպքում ուղեգրել համապատասխան բուժհաստատություն, ամենօրյա վերահսկողություն սահմանել շրջապատի նկատմամբ,
  - 2) տարին 1 անգամ կազմակերպել աշխատակազմի ֆլուորոգրաֆիկ հետազոտություն թոքախտի հայտնաբերման համար,

- 3) խրոնիկ հիվանդությունների սրացման դեպքում ուղեգրել համապատասխան բժշկական կենտրոն,
- 4) անցկացնել սանիտարալուսավորչական աշխատանք ուսանողների և աշխատակազմի շրջանում,
- 5) կազմակերպել առաջին օգնություն,
- 6) վնասվածքների (սալջարդ, ցնցում, կոտրվածք) առկայության դեպքում տեղեկացնել ոստիկանությանը,

### **III. ԿԵՆՏՐՈՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ**

5. Կենտրոնը ենթարկվում է աշխատակազմի կառավարման և տնտեսական հարցով պրոռեկտորին:
6. Կենտրոնի հաստիքակազմը հաստատում և փոփոխում է հոգաբարձուների խորհուրդը՝ ռեկտորի ներկայացմամբ:
7. Կենտրոնի անմիջական կառավարումն իրականացնում է բժիշկը:
8. Բժիշկը, բուժքույրը նշանակվում և ազատվում են պաշտոնից ռեկտորի հրամանով՝ աշխատակազմի կառավարման և տնտեսական հարցով պրոռեկտորի ներկայացմամբ:
9. ԵՊԼՀ-ն Կենտրոնին ապահովում է գույքով, բժշկական սարքավորումներով, դեղորայքով:
10. Կենտրոնը պատասխանատու է՝
  - կենտրոնի սարքավորումների, գույքի, դեղորայքի համար,
  - կենտրոնի ընթացիկ գործառույթների իրականացման համար:
11. Բժշկի բացակայության դեպքում Կենտրոնի պատասխանատվությունը դրվում է բուժքրոջ վրա:
12. Կենտրոնը դեղորայքի, բժշկական պարագաների սպառման դեպքում ներկայացնում է պահանջագիր և նոր դեղորայքի և պարագաների անհրաժեշտության դեպքում՝ զեկուցագիր: